

## ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է Գյումրի քաղաքի օրվան նվիրված տոնական միջոցառումներին

14.10.2013



ՀՀ Շիրակի մարզպետ Ֆելիքս Տոլակյանի հրավերով՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը մասնակցել է Գյումրի քաղաքի օրվան նվիրված տոնական միջոցառումներին: Տոնական միջոցառումների գլխավոր հյուրը ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն էր, որին ուղեկցում էին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը և ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը: Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանում հյուրերը ներկա են եղել «Գյումրին՝ 2013 թվականի ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում կազմակերպված Հացի փառատոնին, որտեղ ներկայացվել էր գյումրեցու ավանդական կենցաղն ու ազգային խոհանոցը: